

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍ

I.

Յուլիսին, երբ անսպասելիօրէն բռնկուեց ներկայ եւրոպական պատերազմը, շատերը կարծում էին, թէ նա չափազանց կարճատև կը լինի, չի անցնի մի քանի շաբաթ և կը դադարի թնդանօթների որոտը, թանկագին մարդկային զոհեր չեն լինի երկու կողմից էլ, կը վերադառնայ նախկին խաղաղութիւնը, և թշնամի պետութիւնները աւելի բարեկիրթ միջոց կը գտնեն իրենց հաշիւները մաքրելու։ Բայց սխալ դուրս եկաւ այս մտածողութիւնը.— ահա երրորդ ամիսն է, ինչ պատերազմը շարունակուում է աւելի կատաղի թափով, և չը գիտենք, թէ երբ կը վերջանայ։ Ուշիմութեամբ հետեւելով պատերազմող կողմերի դիւանագէտները յայտարարութիւններին, մենք անմխիթաբեզբակացութեան ենք յանգում պատերազմի տևողութեան վերաբերմամբ։ Գեռ օգոստոսի սկզբին Անգլիայի մեծ նախարար Ասկլիտը յայտնել էր ներկայացուցիչների ժողովում, որ Անգլիան հինգ տարուայ պատրաստութիւն է տեսնում պատերազմելու համար. իսկ վերջին օրերի հեռագիրը հազորդեց նոյն նախարարի մի ուրիշ յայտարարութիւնը, թէ Անգլիան իսկական պատերազմական գործողութիւնները ընդդէմ Գերմանիայի սկսելու է յառաջիկայ գարնանը. Գերմանիայում էլ պատրաստութիւն են տեսնում ձմեռուայ պատերազմի համար. ուրեմն մինչև օրս եղածը մասնակի ընդհարումներ են, որոնք երբեք չեն կարող վերջնական և ճակատագրական համարուել։ Բեռլինայում օգոստոսին դէմ առ դէմ կանգնած էր կէս միլիօն զօրք իւրաքանչիւր կողմից, Ֆրանսիայի արևելահիւսիսային գաւառներում նոյն թուով զօրքերը մեծ ընդհարումներ ունեցան, նոյալէս ուռւս-գերմանական և ուռւս-աւստրիական սահմանագծերում տեղի ունեցան նշանակալից բաղխումներ խոշոր նուաճումներով և մեծ կորուստներով, բայց այժմ տեսնում ենք, որ այդ բոլորը միայն նախնական բռնկումներ են. վճռական ճակատամարտները դեռ ապա-

գայում են և հետզհետէ աւելի են հեռանում, աւելի ուշ ժամանակի են անցնում: Այդ պարզ կը լինի, երբ համառօտակի աչքի կանցկացնենք վերջին ամսուայ ընթացքում կատարուածը և նրանցից բոլոր հաւանական հետեանքները:

II.

Ինչպէս յայտնի է, Գերմանիան պատերազմի սկզբից իւր բոլոր ուժերը ուղղեց Բելգիայի դէմ և նրա միջով անցաւ ֆրանսիական սահմանը, որ աւելի անպաշտպան էր: Ֆրանսիական զօրքի զօրահրամանատարը, որ մեծ համակրութիւն և հռչակ է վայելում Ֆրանսիայի ժողովրդի մէջ՝ գեներալ Ժօֆֆրը խոհեմութեամբ սկզբում ետ նահանջեց և մինչև Փարիզի մօտերը գերմանական զօրքին ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չը տուեց. գերմանական մօտաւորապէս կէս միլիօն զօրքը ծանր դաշտային թնդանօթներով, որոնցից իւրաքնչիւր մէկին լծում են 30 ձի, մօտեցաւ Փարիզին և բանակ դրեց 25 վերստ հեռու, մի ժամուայ ճանապարհ. եղան օրեր, երբ կարծում էինք, թէ արդէն պաշարել են Փարիզը, սկսուել է ուժակոծութիւնը, մանաւանդ որ դեռ առաջ էլ գերմանական անբօսականները թռիչքներ էին կատարում Փարիզի վրայ և ուումբեր էին նետում քաղաքի մէջ: Ֆրանսիական կառավարութիւնը դեռ պատերազմի սկզբին նախատեսելով, որ թշնամին կարող է մօտենալ Փարիզին և պաշարել, և որ այդ գէպքում կենտրոնական կառավարութիւնը կը կտրուի երկրի միւս մասերի հետ հաղորդակցութեան մէջ լինելուց, ինչպէս որ եղել է առաջուայ պատերազմի ժամանակ, — օր առաջ տեղափոխուել էր ծովին մօտիկ Բօրդօ քաղաքը: Հանրապետութեան նախագահ Ռայմօն Պուանկարէի և նախարարութիւնների հետ Բօրդօ տեղափոխուեցին և օտարերկրեայ դեսպանները, ինչպէս և ազդեցիկ թերթերի խմբագրութիւնները, որպէս զի Փարիզի պաշարուելու գէպքում ազատ լինեն և կապ հաստատեն ֆրանսիական զաւառների հետ: Բայց, հակառակ սպասածին, Գերմանիան չկարողացաւ Փարիզը վերցնել: Օգոստոսի 19-ին տեղի ունեցաւ

վճռական ճակատամարտ. ֆրանսիական և գերմանական բանակները ընդհարուեցին և Գերմանիան ստիպուած եղաւ ետ նահանջել, վերադարձաւ եկած ճանապարհով: Օգոստոսի 19-ի այդ յաղթութիւնը խորտակեց գերմանական պատերազմական ծրագիրը և մեծ ոգևորութիւն պատճառեց ֆրանսիական և առհասարակ դաշնակիցների զօրքին. 44 տարիների ընթացքում Ժօֆֆրը առաջին անգամ ազդարարեց ֆրանսիական զօրքի յաղթութեան մասին, որ հիացմունքով ընդունուեց:

Փարիզի մօտ պարտուելով, Գերմանիան փոխեց իւր ծրագիրը և մեծ արագութեամբ իւր ուժերը կենդրոնացրեց արևմտեան զօրաճակատում, ուսանների դէմ: Հեռանալով գրաւած երկրներից, Գերմանիան բազմապատկեց իւր անգլիութիւններն ու գազանութիւնները. դեռ պատերազմի սկզբին մենք իմացանք, թէ ինչ բարբարոս և անմարդասիրական վերաբերմունք են ցոյց տուել գերմանացիները իրենց երկրում ուսանների, անգլիացիների, ֆրանսիացիների և եսպօնացիների վերաբերմամբ, մեծ նեղութիւններ են պատճառել, շատերին պատերազմական գերի են վերցրել, ենթարկել են ծեծի և բանտարկութեան: Գերման անհատների վայրենական արարքները առաջուց էլ ստացել էին պետութեան հաւանութիւնը. վերջին պարտութիւնից յետոյ նրանք աւելի կատաղեցին և նահանջելիս սոսկալի ուժեղացրեցին ենթարկեցին Ֆրանսիայի Ռէյմս քաղաքը, կործանեցին կաթօլիկները նշանաւոր տաճարը, որի համար Հոլովի նորընծայ պապ Բենեդիկտոս XV-ը բողոք ներկայացրեց Վիլհելմին: Նոյնպիսի ուժեղացրեցին ենթարկուել էին և Բելգիայի Լուվէն և այլ քաղաքները, որտեղ քարը քարի վրայ չէին թողել:

III.

Ռուս-Գերմանական ռազմադաշտում վերջին ամսում տեղի ունեցան խոշոր դէպքեր. ուսանները գնաւալ Ռենենկամֆի հրամանատարութեամբ յաջողութեամբ գրաւեցին արևելեան Պրուսիայի մի շարք նշանաւոր քաղաքները՝

Տիլզիտ, Խնստերբուրգ, Գումբինեօն, Ալլենբուրգ և Ալլեն-
շտէյն քաղաքները, պատրաստվում էին Կեօնիկսբերգ նշա-
նաւոր բերդաքաղաքը պաշարել, բայց գերմանական զօրքը,
Ֆրանսիայի սահմաններում պարտութիւն կրելով—անցաւ
ռուսների դէմ, բայց ռուսները նոր զօրաբանակները
կանգնեցրին գերմանական ուժերի դրոհը և վերջին օրերս
լուր ենք ստանում, թէ ռուսները վերստին դիմելու են
Կեօնիկսբերգի պաշարմանը: Ռուս-գերմանական ռազմա-
դաշտից վերջին շաբաթներս ստանում ենք միայն հակիրճ
տեղեկութիւններ, թէ լինում են մասնակի փոքր ընդհա-
րումներ, որոնք փոփոխական են և չեն կարող ազդել ընդ-
հանուր դրութեան վրայ:

Իսկ Ռուս-Աւստրիական ռազմադաշտից վերջին ամիսը
մենք ստացել ենք մեծ յաղթութիւններին համբաւներ, որոնք
ցնծութիւն են առաջ բերել: Ռուս յաղթական զօրքը մէկը
միւսի ետևից նուաճեց Գալիցիայի նշանաւոր ամրութիւն-
ները, օգոստոսի 21-ին վերցրեց Լեմբերգ (Լվօվ) մեծ քա-
ղաքը, որ Գալիցիայի մայրաքաղաքն է, զեռ առաջ գրա-
ւած էր Տարնօպօլը: Լվօվը վերցնելիս Ռուս արի զօրքը
սոսկալի ջարդ տուեց աւստրիական մեծ բանակին, երեք
օր ու գիշեր անդադրում տեւեց պայքարը և ի վերջոյ աւս-
տրիական բանակը տեղի տուեց, նահանջեց անկարգ կեր-
պով, թողնելով պատերազմի դաշտում բազմաթիւ ռազ-
մամթերք և սպանուածներ և տալով մեծ քանակութեամբ
գերիներ: Վերջին ամսուայ ընթացքում ահագին քանակու-
թեամբ գերիներ բերուեցին Ռուսաստանի ներքին նա-
հանգները. առհասարակ նկատուում էր, որ աւստրիացի
զինւորները յօժարութեամբ էին անձնատուր լինում: Սյփմս
ծրագրուում է այդ գերիներին աշխատեցնելու եղանակը:

Վերջին օրերս Ռուս զօրքը անցել է Սան գետը,
գրաւել է այդ գետի վրայ կառուցուած ամրութիւնները,
վերցրել է մեծ քանակութեամբ ռազմամթերք և թնդա-
նօթներ: Սեպտեմբերի 10-ին ռուսները գրաւել են Շարօս-
լավը. անձնատուր են եղել Պերէմիշլի շրջակայ մի քանի
ամրութիւնները. օրէցօր սպասուում է Պերէմիշլ քաղաքի

նուաճումը: Գրաւելով այդ քաղաքը՝ Ռուս արի զօրքը ազատ մուտք ունի դէպի Կարպատ լեռները և Կրակով քաղաքը:

Աւստրիայում ունեցած յաղթութիւնների առթիւ Ռուսաց Գերագոյն Զօրահրամանատար Մեծ իշխան գեներալ ադիւտանտ Նիկօլայ Նիկօլանիչը մի նշանակալից կոչ է ուղղել Աւստրիայի ժողովուրդներին. այդ կոչում արտայայտած մտքերը շատ հետաքրքրական են և ես ամբողջապէս կը բերեմ այդ.

«Աւստրո-Հունգարիայի ժողովուրդներ,

Վիէննայի կառավարութիւնը պատերազմ յայտարարեց Ռուսաստանին նրա համար, որ Ռուսաստանը, հաւատարիմ իւր պատմական աւանդներին, չը կարողացաւ անօգնական թողնել Սերբիային և թոյլ տալ, որ նա շահագործուի:

Աւստրո-Հունգարիայի ժողովուրդներ,

Ռուսական զօրքը իմ գլխաւորութեամբ մուտ գործելով Աւստրո-Հունգարիայի սահմանները, Ռուսական Մեծ Ցարի անունից յայտնում եմ ձեզ, որ Ռուսաստանը շատ անգամ է արիւն թափել՝ ազատելու ժողովուրդներին օտարերկրեայ լծից, ուրիշ ոչինչ չէ ցանկանում, բացի իրաւունքի և արդարութեան վերականգնումը: Ձեզ, Աւստրո-Հունգարիայի ժողովուրդներ, նա բերում է ազատութիւն և ձեր ժողովրդական նպատակների իրականացում:

Աւստրո-Հունգարական կառավարութիւնը ձեր մէջ դարերով սերմանել է բաժանում և ատելութիւն, որովհետեւ դրանց վրայ է կանգուն ֆրացել նրա իշխանութիւնը: Ռուսաստանը, ընդհակառակը, ձգտում է մի բանի, որպէսզի ձեզնից իւրաքանչիւրը կարողանայ զարգանալ և բարեկարգուել, պահպանելով հայրերի թողած թանկագին ժառանգութիւնը՝ լեզուն և հաւատը, և միանալով հարազատ եղբայրների հետ, հարեանների հետ ապրել խաղաղութեամբ և համերաշխութեամբ, յարգելով նրանց ինքնուրոյնութիւնը:

Հաւատացած, որ դուք բոլոր ուժերով կը նպաստէք այդ նպատակի իրագործմանը, կոչ եմ անում ձեզ՝ դիմաւորել Ռուս զօրքին, որպէս հաւատարիմ ընկերների և իբրև ձեր ազնիւ գաղափարների մարտիկների»:

Այս կոչը տպուած է 11 լեզուներով և բարբառներով և տարածուած է Աւստրո-Հունգարիայի ազգաբնակութեան մէջ. նոյնաման մի կոչ հէնց պատերազմի սկզբին արուեց Լեհացիներին, խոստանալով նրանց բարեկարգ վիճակ: Այս կոչերը և հրապարակական խոստումները մի անգամ ևս գալիս են ապացուցելու, որ Ռուսաստանը հետամուտ չէ նոր երկրների նուաճելուն, նա առանց այդ էլ ընդարձակ է և հարուստ, այլ ցանկանում է միայն մանր ճնշուած ազգութիւնները ազատել բռնակալ լծից, այդ Ռուսաստանի պատմական միօրին է...

IV.

Մի նշանակալից նորութիւն, որ եղաւ վերջին ամսուայ ընթացքում, այդ երբեակ համաձայնութեան դաշնակցութիւն դառնալն էր: Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան ստորագրել են մի պայմանագիր, որով այդ երեքից ոչ մէկը առանձին վերցրած իրաւունք չունի ինքնագլուխ սեպարատ հաշտութիւն կնքել լեզնամու՝ Գերմանիայի կամ Աւստրիայի հետ, առանց դաշնակիցների համաձայնութեան, և ապա յաղթութեան դէպքում առանձին իրաւունք չունեն որ և է պայման առաջարկել, առանց միւսների համաձայնութեան: Այս պայմանագիրը, որ կոչուում է Լոնդոնի օգոստոսի 23-ի դեկլարացիա, ամրացնում է դաշնակիցներին և ազատ է պահում հնարաւոր երկպառակութիւնից և քայքայումից՝ պատերազմի ընթացքում, մի կողմից, և կանխելու ասպագայ հաւանական շփումից՝ պատերազմից յետոյ յաղթութեան արգասիքները իրար մէջ բաժանելիս — միւս կողմից:

Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համերաշխութեան այս նոր ապացոյցը մի ջախջախիչ հարուած էր Գերմանիային և Աւստրիային, որոնք ռազմադաշտում տապալուելուց յետոյ զրկուեցին իրենց գաղտնի նպատակները իրագործումից. Գերմանիայի ծրագիրը փոխուեց. նա սկզբում յարձակուեց Բելգիայի և Ֆրանսիայի վրայ, նրանց ուժասպառ անելու և շուտով իրեն ձեռնտու դաշն կապելու:

Ֆրանսիայի հետ, և ապա այդ սահմանագծում ապահով զգալով իրեն ամբողջ ուժը կենդրոնացնել Ռուսների դէմ: Բայց այդ նրան չը յաջողուեց, Վիլհելմ կայսրը չը կարողացաւ Փարիզ մտնել և այնտեղ ճաշել, ինչպէս ծրագրել էր:

Հաւանական է, որ օգոստոսի 23-ի գեկլարացիային կը միանան և Բելգիան, Սերբիան, Չերնօգօրիան, դուքէ և Եսպոնիան, որոնք ներկայ պատերազմում բաղդակից են և մենամարտում են մի ընդհանուր թշնամու դէմ: Այս գեկլարացիան և ասում է մեզ, որ պատերազմից յետոյ լինելու է համաշխարհային մեծ վեհաժողով, որովհետեւ ոչ թէ միայն Եւրոպական հարցեր են լուծուելու, այլ և Աֆրիկայում, Ասիայում և Ովկիանոսներում գտնուող կղզիների և գաղութների հարցերը: Դժբախտաբար մենք հնարաւորութիւն չունենք ծովային և գաղութների համար մղուող պատերազմին ևս հետևել. մեզ մօտիկ եւրոպական տաճնապը այնքան է կլանել մեր ուշադրութիւնը, որ մենք անուշադիր ենք թողնում հեռաւոր Արևելքից կամ Աֆրիկայի ծայրերից եկած տեղեկութիւնները:

Յիշելու է միայն, որ գերմանական գաղութները կամաց կամաց ենթարկուում են անգլիական ազդեցութեան, Եսպոնիան ամենայն եռանդով ցանկանում է Չինաստանը ազատել գերմանացիներից և իւր իրաւունքները ընդլայնել:

Իսկ Եւրոպայի ջրերում ծովային պատերազմը տարուում է ամենակատաղի կերպով. գերմանական ստորջրեայ ռազմանաւերը Հիւսիսային ծովում խորտակել էին անգլիական երեք խոշոր պատերազմական նաւերը: Այդ առաջին զգալի կորուստն էր Անգլիայի համար:

V.

Անցնող ամսուայ ընթացքում մի քանի անգամ խօսուեց հաշտութեան մասին. դեռ օգոստոսի մէջ Միացեալ Նահանգների նախագահը առաջարկել էր հաշտուել, բայց ոչ մի կողմը չը լսեց. նոյնպէս և կաթօլիկների պապ Բենեդիկտոս XV-ը, ցանկանալով մի բանով յաւերժացնել Պետրոս առաքեալի իւր գահ բարձրանալը, առաջարկեց Ֆրան-

սիային հաշտուել, բայց մերժում ստացաւ. կռուող կողմերից ոչ մէկը դեռ հաշտութեան մտադրութիւն չունի. միայն այն հաղորդակցութիւններն, որ լինում են Ամերիկայի Միացեալ Նահանգների և մասնաւորապէս Գերմանիայի միջև, կարծես հաշտութեան նախապատրաստական աշխատանքներ են. նշանակալից է այս փաստը, որ Գերմանիան առաջինն է ցանկանում իւր կողմը գրաւել Ամերիկայի հասարակական կարծիքը և դրա համար խտրութիւն չէ դնում միջոցների մէջ. Պատերազմի հէնց սկզբից գերմանական զազանութիւնների լուրը անկեղծ վրդովմունք պատճառեց բոլորին, իսկ երբ յայտնի դարձաւ, թէ գերմանացի զինւորները գործ են ածում դում-դում գնդակները, չնայած որ Հաագայի միջազգային ժողովում որոշուել է այդպիսի գնդակ դործ չածել, և որ այդ որոշման ստորագրել է և Գերմանիան, այն ժամանակ արդէն տեղի ունեցան մի շարք բողոքներ և այդ բոլորը ի նկատ առնուեց՝ սպագայ վեհաժողովին գեկուցանելու համար: Բայց Գերմանիայի կայսրը զանգատուել էր Միացեալ Նահանգների նախագահին, թէ Ֆրանսիացիք են գործ ածում դում-դում գնդակը, թէ Ֆրանսիացի զինւորներն են զազանութիւններ անում... Ակնյայտնի խաբէութիւն: Դրան պատասխանեց Ֆրանսիայի նախագահը՝ որ հերքեց Վիլհելմի անհիմն մեղադրանքները և պարզեց իրողութիւնը՝ գերմանական զազանութիւնները:

Գերմանական ֆիզիքական ուժի զազանութիւններին հետ միաժանակ տեղի ունեցան և գերմանական մտածողութեան, գերման գիտնականների բարբարոսութիւնները: Ամբողջ աշխարհի մտածող մարդիկ զարմացան այն տեղեկութեամբ, թէ ինչպէս գերմանական գիտնականներն և պրոֆէսորներն հռչակաւոր գիտուն Հեկկելի նախագահութեամբ ժողով են գումարում և որոշում են հրաժարուել թշնամի պետութիւնների գիտական հիմնարկութիւններից և հաստատութիւններից ստացած գիտական տիպոգրաներից և ջրանշաններից, կարծես գիտական տիպոգրոս ստանալը մի ողորմածութիւն է, որ անում են, և կամ անհատական բարի

ցանկութիւն է: Իսկ գերմանացի գրողները և հեղինակները որոշել են այլ ևս չը թարգմանել թշնամի երկրների գրական երկերը, չը կարդալ նրանց գրքերը... Ի՞նչ է այս: Շատ ճիշտ է նկատել Ռուս գիտնական Կիզելմետտէրը «Русская Вѣдомости» լրագրում, թէ երբ խիղճը պղտորուում և մթնում, վարակում է և միտքը... Ուրիշ բան էր, եթէ գերմանացի գիտնականը մի առժամանակ մոռանար գիտութիւնը և որպէս հասարակ զինուոր զօրքի շարքերը մտնէր և պատերազմի դաշտ դուրս գար յաղթելու կամ յաղթուելու: այդ չէինք դատապարտի, այդ ամեն քաղաքացու պարտականութիւնն է: Իսկ ամեն մի անհատ գիտնական լինելուց առաջ քաղաքացի է: Բայց գերմանացի գիտնականները այլ կերպ վարուեցին, նրանք գիտութիւնն և իմաստասիրութիւնն ևս կապեցին պատերազմի հետ, այն գիտութիւնը, որ համամարդկային է և հայրենիք չէ ճանաչում: Երբ գիտնականները ենթարկուում են պատերազմական խփուտքին և գիտական տիտղոսները հաւասարուում են զինուորական պարզկներին— այդ ապացուցանում է, որ երկարատե և կայուն չէ կարող լինել այդ գիտութեան հեղինակութիւնը և կենսունակութիւնը:

VI.

Վերջում խօսենք թիւրքիայի մասին, որ այս անցնող ամսում լարուած սպասեցնել է տուել մեզ իւր հաւանական յանդուգն արարքներով:

Գերմանիան, որ Իտալիայի բաժանուելով և չեզօքութիւն պահելով մենակ մնաց Աւստրիայի հետ, ամեն կերպ աշխատեց Իտալիայի փոխարէն մի ուրիշ դաշնակից գտնել, միշտ կրկնելով Բիսմարկի թողած պատգամը, թէ երբեակ դաշնակցութեան մէջ է Գերմանիայի ապագան: Վիլհելմը սկզբում ապարդիւն որոնումներ արեց, յորդորեց Իտալիայի Վիլտօր—էմմանուէլին միանալ իրեն, նամակներ գրեց Նորվեգիայի, Շվեդիայի և Իսպանիայի միապետներին, առաջարկելով դաշնակից դառնալ, բայց ամեն տեղ մերժում ստացաւ և ի վերջոյ իւր հայեացքը ուղղեց հին մտերիմ՝ սուլթանին. թէև առաջ թիւրքիան գտնուում էր գերմանա-

ցիւների զօրեղ ազդեցութեան տակ, բայց պատերազմի սկսուելով գերմանացիները բացառիկ իշխանութիւն ստացան երկրի մէջ, նրանք են Կ. Պօլսում Բ. Դռանը տոն տուողները: Գերմանական երկու ռազմականներ եկան Բօսֆօր, Ռումինիայի և Բօլգարիայի միջով բազմաթիւ զինւորներ և օֆիցերներ անցան, ռազմամթերք տեղափոխուեց, գերմանացի գէներալ Սանդէրսը հրամանատար կարգուեց Էրզրումի զօրաբանակի և այլն:

Թիւրքիան դեռ յուլիսին զօրահաւաք յայտարարեց, սահմանագծերը զօրքերով լցրեց, Յունաստանի հետ կղզիների պատճառաւ ցանկացաւ պատերազմի բռնուել, Էրզրումում ռազմական ամրութիւններ կառուցեց, — այս և ուրիշ աղմկալի պատրաստութիւններով մի ամսից աւել Դամոկլեան սրի պէս պատերազմի երկիւղը տարածեց իւր ժողովրդի մէջ, և հարկադրեց հարևան պետութիւններին նոյնպէս պատրաստուել: Կ. Պօլսում կազմուեց երկու կուսակցութիւն — մէկը Ջէմալ փաշայի խումբը, որ կորստաբեր էր համարում պատերազմը և հակառակ էր նրան, միւսը Էնվեր փաշայի խումբը, որ փրկարար էր համարում պատերազմը և ամեն կերպ աշխատում էր արագացնել դէպքերը. Սուլթանի զահափառանգն հակառակ էր պատերազմին, սրա և Էնվերի մէջ ընդհարում է լինում, իրար գնդակներով վիրաւորում են, բայց պարգուել է, որ այդ ընդհարման պատճառը եղել են զահափառանգի ձիերը, որոնք վերցուած են եղել Էնվերի կարգադրութեամբ: (Էնվեր — փաշան Թիւրքիայի զինուորական նախարարն է, իսկ Ջէմալ — փաշան մեծ վեզիրն է):

Մինչև օրս յայտնի չէ, թէ երկու խմբից որը յաղթող կը հանդիսանայ. գուցէ, ինչպէս գրել եմ մի ուրիշ տեղ¹⁾, Թիւրքիան դեռ երկար շարունակէ իւր պատերազմական պատրաստութիւնները և ընդհանուր շփոթի ժամանակ առաջ տանի իւր մի շարք ծրագիրները, վերացնէ իրեն անհաճոյ հաստատութիւնները, ինչպէս և արդէն արել է. նա վերացրել է կապիտուլիացիաները, Թիւրքիայում ապրող օտարահպատակների մի շարք արածնութիւնները՝ հիւ-

1) Տես «Մշակ» №№ 186 և 202:

պատուները դատարանում դատուելը և դրամատուները և փոստի անկախութիւնը. այս մենաշնորհումներն և արտօնութիւնները օտարահպատակները սուլթանների երկրում վայելում էին շատ հին ժամանակից: Մեծ պետութիւններն արդէն բողոքել են այս վերացման առթիւ և հաւանօրէն արգելք կը լինեն թիւրքիային ի կատար ածելու իւր յայտարարութիւնը վերացման համար, չնայած, որ թիւրքիան յայտնել է, թէ պատերազմ կը յայտարարէ այն պետութեան, որ չի ընդունէ կապիտուլիացիաների վերացումը: Դրա հետ միաժամանակ թիւրքիան ետ է կանչել Հայկական վիլայէթները համար նշանակուած երկու ընդհանուր քննիչներին՝ Հօֆին և Վեսթենիկին և նրանց գործակիցներին: Այժմ էլ Բ. Դուան կարգադրութեամբ Դարգանէլի նեղուցը փակուած է բոլոր տեսակի օտարերկրեայ նաւերի, նոյն իսկ առևտրական և մարդատար շոգենաւերի համար:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ թիւրքիան, հաւատարիմ իւր հին քաղաքականութեանը և հանգամանքներից օգտուելու իւր հմտութեանը, ի չիք է դարձնում իրեն անհաճոյ հաստատութիւնները: Թէ ինչ կը լինի միւս ամսին՝ այդ կը տեսնենք:

Գ. Տէր-Ռոյբիճեան.

16 սեպտեմբերի 1914.

Ս. Էջմիածին.

Բ Ե Լ Գ Ի Ա.

Գերմանիան որոշել էր մտնել Ֆրանսիա և պաշարել Փարիզը, անցնելով Բելգիայի միջով, ի նկատի առնելով, որ չափազանց զգուարին կը լինէր յարձակուել Ֆրանսիայի վրայ նորա արևելեան կողմից, որտեղ կան մի շարք մամուր բերդեր, որոնց դրաւելու համար մեծ կորուստ և ժամանակ է հարկաւոր: Գերմանիան յոյս ունէր՝ որ Բելգիայի կառավարութիւնը ոչ մի ընդդիմադրութիւն չի ցոյց տալ, եթէ իւր զօրքերը նորա հողով անցկացնէր դէպի Ֆրանսիա: Բայց գերմանացիների յոյսերը չարդարացան և Բելգիան, իբրև չեզոք թագաւորութիւն, չկամեցաւ ոտնակոխ անել արդարութիւնը և ի փաստ իւր մեծ հարեան Ֆրան-